

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/2

2 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Հեսար» ՍՊԸ փոխտնօրեն Գեղամ Հարությունյանի 24.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.12.2015 թ-ի թիվ 308566/02 որոշման դեմ:

#### **Գեղամ Հարությունյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետը 2015թ. դեկտեմբերի 14-ին կայացրել է թիվ 308566/02 որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Հեսար» ՍՊԸ փոխտնօրեն Գեղամ Հարությունյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ նշանակելով 20.000 ՀՀ դրամ տուգանք:

Գանգատաբերը գտնում է, որ Որոշումը ոչ իրավաչափ է՝ հետևյալ հիմնավորումներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայտարարագիրը կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Որոշման համաձայն՝ Գեղամ Հարությունյանն օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ. 1-ին, 2-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում...»:

Տվյալ դեպքում «Հեսար» ՍՊԸ-ն ներկայացրել է 2015թ. առաջին և երկրորդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները 2015թ. օգոստոսի 25-ին: Հետևաբար, 2015թ. դեկտեմբերի 14-ին նշված հիմքով վարչական տույժ չէր կարող նշանակվել, քանի որ համապատասխան հաշվարկները ներկայացնելու, այսինքն՝ այդ մասին նաև հարկային մարմին հայտնի դառնալու օրվանից անցել էր ավելի քան երկու ամիս:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի դրույթները գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 2015թ. դեկտեմբերի 14-ի թիվ 308566/02 որոշումը:

**«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 03.12.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Հեսսար» ՍՊԸ փոխտնօրեն Գեղամ Հարությունյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները, որի համար նախատեսված է պատասխանատվություն:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 14.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 308566/02 որոշումը Գեղամ Հարությունյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Որոշումը կայացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Տվյալ դեպքում Գեղամ Հարությունյանը վարչական պատասխանատվության է ենթարկվել 2015 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները սահմանված ժամկետում չներկայացնելու համար:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների համաձայն ԱԱՀ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ իրենց գրանցման վայրի հարկային տեսչության մարմին են ներկայացնում պետական բյուջե ԱԱՀ-ի վճարման համար համապատասխան հաշվարկներ:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից հետևում է, որ քննարկվող դեպքում Գեղամ Հարությունյանը 2015 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը ուշ ներկայացնելու մասով իրավախախտումը կատարել է 2015 թ-ի ապրիլի 21-ին, իսկ 2015 թ-ի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկի մասով՝ 2015 թ-ի հուլիսի 21-ին, սակայն վարչական տույժը նշանակվել է միայն 2015 թ-ի դեկտեմբերի 14-ին: Այսինքն, վարչական տույժը նշանակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ, այն է՝ իրավախախտումը կատարվելու օրվանից երկու ամիս հետո ընկած ժամանակահատվածում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Գեղամ Հարությունյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.12.2015 թ-ի թիվ 308566/02 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**